ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2024 թվականի N 1780 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 506-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի ապրիլի 12-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԳԵՎՄԻԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 506-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) հավելվածի ցանկի «ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակի 1-ին կետի «Քանակը» սյունակի «157 500» թիվը փոխարինել «166 992» թվով.

2) «ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակի ցանկը 1-ին կետից հետո լրացնել նոր՝ 2-4-րդ կետերով.

«

2	0601103000	Կակաչի սածիլներ	Կակաչի սածիլներ	հատ	999495	Նիդերլանդներ	Նիդերլանդներ	110 000 000	
3	0602905000	Դրախտավայրի սածիլներ	Դրախտավայրի սածիլներ	հատ	22166	Նիդերլանդներ	Նիդերլանդներ	4 500 000	
4	0602905000	Քաջվարդի սածիլներ	Քաջվարդի սածիլներ	հատ	10000	Նիդերլանդներ	Նիդերլանդներ	15 500 000	

».

3) հավելվածի ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «1 560 000 000» թիվը փոխարինել «1 690 000 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ